ԼՐԱՄՇԱԿՎԱԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» 2018 թվականի մարտի 7-ի ՀՕ-145-Ն օրենքի 4-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.Անվտանգության խորհրդի նիստերին մասնակցելու իրավունք ունի Ազգային ժողովի նախագահը: Անվտանգության խորհրդի նիստերին կարող են նաև մասնակցել վարչապետի հրավիրած անձինք:»,

~~1) մասում «կարող են մասնակցել նաև վարչապետի հրավիրած այլ անձինք» բառերը փոխարինել «մասնակցելու իրավունք ունի Ազգային ժողովի նախագահը, ինչպես նաև կարող են մասնակցել վարչապետի հրավիրած անձինք» բառերով,~~

2) 10-րդ մասում «անդամներն» բառը փոխարինել «անդամները, ինչպես նաև Ազգային ժողովի նախագահն» բառերով,

3) 11-րդ մասը «անդամներին» բառից հետո լրացնել «, ինչպես նաև Ազգային ժողովի նախագահին» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: